ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

հ/հ	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Սամվել Դիլանչյան 25.01.2024 23:44:00	5_րդ ձևի բացակայության համար տնտեսվարողը տուգանվում է, իսկ որ սպանդանոցները արդեն 6 ամիս է տարածված համաճարակի պատճառով մասսայական կոտորված խոզի միսը էժան գուղացուց ձետք են բերում և 5_րդ ձևը խփում և առաքում են խանութներ դրա համար ոչ մեկին ոչ մի բան չի հասնում:	Ձեր ներկայացված հարցը տվյալ նախագծի կարգավորման առարկան չէ:	
2	ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ	Նաև անհրաժեշտ է կատարել լրացումներ ՞Սպառողների անկյուն՞ կամ ՞Տեղեկատվություն սպառողներին՞ ստենդերի պարտադիր տեղադրման վերաբերյալ, որոնք ի սպառ	Ձեր կողմից արված առաջարկությունը կքննարկվի և անհրաժեշտության դեպքում	

	17.01.2024 15:28:36	բացակայում են Հայաստանի գրեթե բոլոր առևտուր իրականացնող ու ծառայություններ մատուցող կազմակերպություններում: Պատկան մարմիններին պատրաստ ենք ներկայացնել մեր փաստերն ու հիմնավորումները ՞Սպառողի անկյուն՞-ի պարտադիր տեղադրման օգութների և անհրաժեշտության վերաբերյալ:	նախագիծը կլրամշակվի:	
3	ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ 17.01.2024 15:09:12	Հստակեցնել ու շարադրել հետևյալ ձևով ՝«47. Սառնարանային պահպանման անհրաժեշտություն չպահանջող բոլոր այլ մրգերի ու բանջարեղենի վաճառքը՝ առանց տակդիրների կամ դարակաշարերի, կամ եթե դրանց բարձրությունը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափին, կամ տոնավաճառներում կամ տաղավարներում իրականացվում է առանց ծածկերի կամ հովանոցների, ինչպես նաև կտրած կամ մասերի բաժանված՝...	Ձեր կողմից արված առաջարկությունը կքննարկվի և անհրաժեշտության դեպքում նախագիծը կլրամշակվի:	